

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 23/6

17 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Հռիփսիմե Սիմոնյանի 19.09.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 29.07.2014 թ-ի թիվ 871 որոշման դեմ:

Քաղաքացի Ա/Ձ Հռիփսիմե Սիմոնյանի գանգատում բերված փաստարկները.

07.08.2014 թ-ին փոստային ծառայության միջոցով Հռիփսիմե Սիմոնյանին (այսուհետ նաև գանգատաբեր) հանձնվել է ՀՀ ՖՆ Կենտրոնի հարկային տեսչության պետի 29.07.2014 թ-ի թիվ 871 որոշումը և ծանուցագիր, որով առաջարկվել է 30.07.2014 թ-ին ժամը 11:00-ին ներկայանալ ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ, որպես հարկերը սահմանված ժամկետում չվճարելու հիմքով վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ՀՀ ՎԻՎՕ 170-րդ հոդվածի հատկանիշներով գործի քննությանը:

Ակնհայտ է, որ ծանուցումը կրում է ձևական բնույթ՝ այն առանց ամսաթվի և ելից գրանցման նշումի է: Բացի այդ, ՎԻՎՕ 170-րդ հոդվածը դեռևս 23.06.97 թ-ի ՀՕ-133 վերացվել է և այդ հոդվածի /Պետական մենաշնորհի հանդիսացող ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելը/ հատկանիշներով գործ լինել, հետևաբար և քննվել, չէր կարող: Նշված օրը և ժամին չէր կարող քննվել նաև այն պատճառով, որ ծանուցագրում նշված ժամկետից դեռևս մեկ օր առաջ՝ խախտելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջները, առանց գանգատաբերի մասնակցությունն ապահովելու, արդեն իսկ հարցը քննարկվել և որոշում էր կայացվել:

03.09.2014 թ-ին ներկայացված դիմումով գանգատաբերը Կենտրոնի ՀՏ-ին առաջարկվել է վերանայել անհիմն որոշումը, ինչպես նաև դիմումը ընդունել որպես բողոք և քննարկել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70 հոդվածով սահմանված կարգով: Սակայն, օրենքի նշված պահանջը ՀՏ-ն անտեսել է, իրենց անօրինական գործողությունների դեմ ներկայացված դիմում-բողոքը թողել է անհետևանք և գրավոր պատասխանելու փոխարեն առաջարկվել է որոշումն բողոքարկել նախարարության բողոքարկման հանձնաժողովին:

Համաձայն Կենտրոնի հարկային տեսչության պետի որոշման՝ Ա/Ձ Հռիփսիմե Սիմոնյանի մոտ հաշվարկների հիման վրա առաջացել են սոցիալական ապահովության վճարի գծով չկատարած հարկային պարտավորություններ, որը 26.07.2014 թ-ի դրությամբ կազմում է 363.508 դրամ և ենթակա է գանձման:

Հիշյալ որոշումն անհիմն է, որի մասին է վկայում ստորև ներկայացվող իրավական նորմերն ու փաստական հանգամանքները:

1. ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի, 22-րդ հոդվածի 6-րդ մասի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 2-րդ հոդվածի, 12-րդ հոդվածի դրույթների համաձայն պետական մարմիններն ու նրանց պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են սահմանադրությամբ կամ օրենքներով, ինչը նշանակում է, որ հարկային տեսչությունն իր գործունեության ընթացքում պարտավոր է գործել նաև համաձայն հարկային

օրենսդրության՝ օրենքով նախատեսված ժամկետներում և կարգով հասնել նրան, որպեսզի իրավաբանական և ֆիզիկական անձինք կատարեն հարկային օրենսդրությամբ նախատեսված իրենց պարտականությունները, վճարեն ՀՀ օրենքներով նախատեսված հարկերը: Սակայն, տվյալ պարագայում, հարկային մարմինը կատարել է ՀՀ Սահմանադրությամբ արգելվող, օրենսդրությամբ չնախատեսված և օրենքներին հակասող գործողություն՝ կայացրել է որոշում գանգատաբերին պատասխանատվության ենթարկելու, հաշվարկների հիման վրա առաջացած «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» 26.12.1997թ. ՀՀ օրենքով նախատեսված, սոցիալական ապահովության վճարի գծով չկատարած հարկային պարտավորությունները գանձելու մասին, այն դեպքում, երբ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքը դեռևս 01.01.2013 թ-ին ուժը կորցրել է, իսկ «Հարկերի մասին» ՀՀ օրենքով նման հարկատեսակ ընդհանրապես նախատեսված չէ:

2. Գանգատում մեջբերվել են Օրենքի 1-ին հոդվածի, 3-րդ հոդվածի և 9-րդ հոդվածի դրույթները:

Որպես Ա/Ձ գանգատաբերը գործել է «Փեթակ» ՍՊԸ-ում՝ վարձակալած տարածքում և հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով ՍՊԸ-ի միջոցով յուրաքանչյուր ամիս պատշաճ վճարել է ինչպես հաստատագրված վճարները, այնպես էլ 2008 թ-ի գործող հարկային օրենսդրությամբ սահմանված պարտադիր սոցիալական ապահովության վճարները: Այնուհետև՝ 2009 թ-ի հունվարից դադարեցրել է Ա/Ձ գործունեությունը, որի վերաբերյալ «Փեթակ» ՍՊԸ-ի միջոցով հայտարարություն է ներկայացրել հարկային տեսչությանը: Օրենքի համաձայն այդ պահից էլ դադարեցրել է, որպես Ա/Ձ, կատարել հարկային պարտավորությունները՝ վճարել ինչպես «Հաստատագրված վճարների մասին», այնպես էլ այդ ժամանակ գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքներով սահմանված հարկերի գումարները: Այնուհետև, որպես վարձու աշխատող 09.02.2009 թ-ից մինչև 19.04.2013 թ-ն աշխատել է «Նորադարձ» ՍՊԸ-ում, որի ընթացքում աշխատավարձից եկամտահարկի հետ միասին գանձվել է նաև սոցիալական վճարը, և գործատուի կողմից 09.02.2009 թ-ից մինչ օրենքի ուժը կորցնելը՝ 01.01.2013 թ-ը, սոցիալական վճարները փոխանցվել են բյուջե:

Նշվածը վկայում է, որ օրենքով նախատեսված պարտականությունները կատարվել են «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի գործելու ընթացքում, ոչ թե որպես Ա/Ձ, այլ արդեն որպես վարձու աշխատող, հետևապես սոցիալական վճարները որոշման մեջ նշված ժամանակահատվածում սահմանված կարգով գանձվել են, ինչը հավանաբար հայտնի չի եղել հարկային մարմնին: Հակառակ դեպքում որոշմամբ չէր խախտվի Օրենքի պահանջը և փորձ չէր արվի նշված ժամանակաշրջանում նույն տեսակի հարկով ինձ կրկնակի հարկել:

3. Մինչ 01.01.13 թ-ը գործած «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն. «Հայցային վաղեմության և գանձման անվիճելիության կարգի կիրառման համար սահմանվում է երեք տարվա ժամկետ՝ ապառքի գոյացման պահից»:

Օրենքի 30.1 հոդվածի 1-ին մասի համաձայն. «Հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո, ...»:

Ըստ որոշման, ապառքը ընդգրկում է 2009 թ-ի փետրվարից մինչ 2012 թ-ը: Այսինքն, «խախտումը», եթե իրոք այդպիսին առկա է, հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող հինգ և ավելի տարի հետո: Հետևաբար, ինչպես 1-ին և 2-րդ կետերում նշված իրավական հիմքերը և փաստական տվյալները, 3-րդ կետում նշվածը ևս, բացառում են հարկային պարտավորությունների առաջացումն ու կիրառումը:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է վերացնել ՀՀ ՖՆ Կենտրոնի հարկային տեսչության պետի 29.07.2014 թ-ի թիվ 871 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Հռիփսիմե Սիմոնյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը 29.07.2014 թ-ին ընդունել է թիվ 871 որոշումը (այսուհետ նաև Որոշում), համաձայն որի 26.07.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Հռիփսիմե Սիմոնյանի չկատարված հարկային պարտավորությունը կազմում է ընդամենը 363.508 դրամ, որը նվազագույն սոցիալական ապահովության վճարի գծով է:

Գանգատում բերված պնդումների վերաբերյալ, որ հարկային մարմինը կատարել է ՀՀ օրենսդրությամբ չնախատեսված գործողություն՝ կայացրել է որոշում սոցիալական ապահովության վճարի գծով չկատարած հարկային պարտավորությունը գանձելու մասին, նշվեց հետևյալը:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն. «Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս»:

Վերոգրյալից հետևում է, որ հարկային մարմինը՝ ի դեմս Կենտրոնի ՀՏ պետի, 29.07.2014 թ-ի թիվ 871 որոշումն ընդունելիս գործել է ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում:

Գանգատում բերված պնդումների վերաբերյալ, որ Հռիփսիմե Սիմոնյանը որպես վարձու աշխատող 09.02.2009 թ-ից մինչև 19.04.2013 թ-ն աշխատել է «Նորադարձ» ՍՊԸ-ում, որի ընթացքում աշխատավարձից գանձվել է նաև սոցիալական վճարը, հետևապես Որոշմամբ չէին կարող կրկնակի անգամ սոցիալական ապահովության վճարի գծով պարտավորություններ առաջադրվել, նշվեց հետևյալը:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում խոսքը գնում է տարբեր իրավահարաբերությունների մասին և «Նորադարձ» ՍՊԸ-ում աշխատանքի վարձատրության դիմաց Հռիփսիմե Սիմոնյանի ստացված եկամուտներից պահված սոցիալական ապահովության վճարի գումարները չեն կարող նույնացվել Ա/Ձ Հռիփսիմե Սիմոնյանի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վճարման ենթակա սոցիալական ապահովության վճարի գումարների հետ: Հետևապես, գանգատաբերի պնդումները վերը նշված պայմաններում սոցիալական ապահովության վճարը կրկնակի գանձվելու վերաբերյալ, հիմնավոր չեն:

Ինչ վերաբերվում է գանգատոմ բերված այն պնդումներին, որ տվյալ դեպքում կիրառելի են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի դրույթները, որի հետևանքով սոցիալական ապահովության վճարի գծով լրացուցիչ պարտավորություններ չեն կարող առաջադրվել, նշվեց հետևյալը:

Քննարկվող դեպքում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի դրույթները կիրառելի չեն, քանի որ սոցիալական ապահովության վճարի գծով պարտավորությունները ոչ թե հայտնաբերվել են Որոշումը կայացվելու ընթացքում, այլ դրանք սահմանված կարգով յուրաքանչյուր ամիս հաշվարկվել են Ա/Ձ Հոփսիմե Սիմոնյանի անձնական հաշվի քարտում: Այսինքն, Ա/Ձ Հոփսիմե Սիմոնյանի սոցիալական ապահովության վճարի գծով պարտավորությունները հարկային մարմինն հայնի են եղել դրանց առաջացման իսկ օրվանից:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 29.07.2014 թ-ի թիվ 871 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ